DOI: 10.59560/18291155-2025.2-209

ԱԼԻԿ ԱԶԱՏՅԱՆ

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ծառայության կազմակերպման վարչության ավագ հրահանգիչ-իրավաբան, փրկարարական ծառայության փոխգնդապետ, Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԼԻՐ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Ամփոփագիր

Երեխայի իրավական կարգավիճակի սահմանումը պահանջում է տեսական մոտեցումների համակողմանի ուսումնասիրություն, որը, իր հերթին, պահանջում է ոչ միայն «իրավական կարգավիճակի» հայեցակարգի, այլև դրա կառուցվածքային տարրերի սահմանում:

Երեխայի «իրավական կարգավիճակի» հայեցակարգի մշակման տեսա-գործնական անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այս հարցի վերաբերյալ չկա միասնական մոտեցում:

Իրավաբանական գրականությունում վերոգրյալի կապակցությամբ առկա են տարբեր տեսակետներ, որոնք միմյանցից տարբերվում են տրամագծորեն հակառակ տեսակետներով:

Որոշ հեղինակներ, «իրավական կարգավիճակ» հասկացությանը զուգահեռ, կիրառում են «իրավական դիրք» տերմինը՝ փորձելով ընդհան-րացնել այս երկու հասկացությունները՝ դիտարկելով դրանք իրավական հասկացությունների ընդհանուր համատեքստում՝ չտարանջատելով դրանցով պայմանավորված իրավական փաստերը ոչ իրավականից:

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել «երեխայի իրավական կարգավիճակը» քննարկել երկու կարևոր նախադրյալի՝ քաղաքացիության և իրավասուբյեկտության համատեքստում՝ որպես իրավունքի միջճյուղային պատկանելությամբ չսահմանափակված կատեգորիաներ և իրավունքի

սուբյեկտի կարգավիճակը բնորոշող ինքնուրույն ու պարտադիր բաղադրիչներ՝ լինելով այն կարծիքին, որ վերջիններս լավագույնս են բնորոշում երեխային՝ իրավունքի լիիրավ սուբյեկտ դիտարկելու հանգամանքը՝ ի տարբերություն քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային ու այլ իրավահարաբերություններին երեխայի մասնակցության աստիճանի, որտեղ վերջինիս՝ իրավունքի լիարժեք սուբյեկտ դիտարկելը սահմանափակվում է իրավունքի միջճյուղային նորմերի կարգավորման շրջանակներով:

Հիմնաբառեր. իրավական կարգավիճակ, իրավական դիրք, իրավասուբյեկտություն, իրավունակություն, գործունակություն, մեղսունակություն, սուբյեկտիվ իրավունք:

Երեխայի իրավական կարգավիճակի հայեցակարգի սահմանման ընդհանուր տեսական մոտեցումներ: Երեխայի իրավական կարգավիճակի սահմանումը պահանջում է տեսական մոտեցումների համակողմանի ուսումնասիրություն, որը, իր հերթին, պահանջում է ոչ միայն «իրավական կարգավիճակ» հայեցակարգի, այլև դրա կառուցվածքային տարրերի սահմանում:

Ամենաընդհանուր ընկալմամբ, քաղաքացու իրավական կարգավիճակը հաստատում է հասարակության մեջ նրա դիրքը, որն արտահայտվում է տարբեր իրավահարաբերության շրջանակներում քաղաքացու՝ որպես իրավունքի սուբյեկտի, մասնակցության աստիճանով:

Այն անքակտելիորեն կապված է այնպիսի իրավական կատեգորիայի հետ, ինչպիսին է «մարդու իրավունքները», որն առանձնանում է իր բարդ կառուցվածքով և հանդես գալիս այնպիսի հասկացությունների համատեքստում, ինչպիսիք են «քաղաքացու իրավունքները», «մարդու իրավունքներն ու ազատությունները», մարդու հիմնական (հիմնարար) և այլ իրավունքները, անհատի իրավունքներն ու կոլեկտիվ իրավունքները[1]:

Իրավունքների և պարտականությունների համալիր բնույթով, ինչպես նաև տվյալ իրադրությամբ և իրավունքի սուբյեկտի կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված՝ մասնագիտական գրականության մեջ, հաճախ, «իրավական կարգավիճակ» և «իրավասուբյեկտություն»[2] հասկացու-

[1] Права человека / Под ред. Е.А. Лукашевон. - М., 1995. - С. 132.

[2] **Якимов А.Ю.** Статус субъекта права (теоретические вопросы) // Государство и право. 2003. № 4. - С. 6; **Бахрах Д.Н.** Субъекты советского административного права. - Свердловск, 1985. - С. 5-6; **Нерсесянц В.С.** Общая теория права и государства. - М., 1999. - С. 512; **Поляков А.В.** Общая теория права: курс лекций. - СПб., 1997. - С. 558.

թյունների խառնաշփոթ է առաջանում, ինչը տարընկալումների և նոր մեկնաբանությունների տեղիք է տալիս:

Այսպես, առանձին հեղինակներ երեխայի իրավական կարգավիճակը դիտարկում են անհատի և պետության միջև առկա իրավահարաբերությունների հիմնական՝ նորմատիվային սկզբունքների առանցքում, որոշներն էլ առանձնացնում են դրանք ընդհանուր սկզբունքներից[1]:

Վերոգրյալը, սակայն, մեր կարծիքով, չպետք է դիտարկվի ուղղակիորեն՝ պայմանավորված սոսկ երեխայի իրավունքով ու կարողությամբ, քանի որ դրանք միայն նրա իրավաբանական անձի ընդհանուր պայմաններն են, իսկ այդ պայմանները, ամենից առաջ, բնութագրվում են այնպիսի տարրով, ինչպիսին է իրավունակությունը, որին հատուկ է ընդհանրական բնույթը: Այսինքն, իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտի համար վերջինս հանդիսանում է պարտադիր պայման՝ տարբերվելով իր «համընդհանրության» նշանով, ինչը նշանակում է, որ այն պատկանում է յուրաքանչյուր երեխայի՝ ծննդյան օրվանից, որն էլ երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ:

Ակնհայտ է, որ իրավունքն ու իրավունակությունն ուղղակիորեն չեն ազդում երեխայի իրավունքների և պարտականությունների մեխանիզմի վրա, այլ, ավելի շուտ, ցույց են տալիս այն իրավաբանական հնարավորությունները, որոնք երեխան ունի օրենքով՝ կախված իր տարիքից:

Հետևապես, գտնում ենք, որ երեխայի իրավական կարգավիճակի հիմնախնդիրը պետք է քննարկել, ամենից առաջ, իրավունքի նորմատիվային սկզբունքների ընդհանուր համատեքստում, այնուհետև, այն դիտարկել որպես իրավունքի միջճյուղային կատեգորիա՝ վերջինիս իրավական կարգավիճակը հնարավորինս սպառիչ բնորոշելու նպատակով:

Մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները սովորաբար դասակարգվում են՝ հաշվի առնելով դրանց սոցիալական նպատակը՝ առանձնացնելով անձնական իրավունքներն ու ազատությունները քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ իրավունքներից[2]:

---

[1] Общая теория права и государства. - М., 1999. - С. 512; **Поляков А.В.** Общая теория права: курс лекций. - СПб., 1997. - С. 558.

[2] **Мишин А.А.** Конституционное (государственное) право зарубежных стран. - М., 1996. - С. 67; **Стрекозов В.Г., Казанцев Ю.Д.** Государственное (конституционное) право Российской Федерации. - М., 1995. - С. 95, 102; **Стрекозов В.Г., Казанцев Ю.Д.** Конституционное право. - М., 2001. - С. 128.

Միաժամանակ, առանձին հետազոտողներ վերը նշված համակցության մեջ նշում են քաղաքական և քաղաքացիական իրավունքների գերակայությունը՝ իրավունքի այլ տեսակների նկատմամբ[1]:

Սա պայմանավորված է, առաջին հերթին, նրանով, որ հենց քաղաքական իրավունքներն են առնչվում մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի միջոցներին, ինչպիսիք են արդարադատությունը, դատական պաշտպանությունը, վնասի հատուցման կամ իրավական պաշտպանության դիմելու իրավունքը, պատշաճ իրավական ընթացակարգը, ինչպես նաև անհրաժեշտ պաշտպանությունը և այն:

Բացի այդ, պետք է նշել, որ քաղաքական ու քաղաքացիական իրավունքները հանդիսանում են մարդու իրավունքների հիմնարար և առաջնային բաղադրիչները: Դրանք կազմում են 1948 թվականին ընդունված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի առաջին մասը (սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքներն էլ կազմում են երկրորդ մասը)[2]:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ իրավունքի տեսակների նման առաջնահերթության պարագայում տեսական հիմնավորման կարիք ունի ոչ միայն իրավական կարգավիճակի[3] բուն հայեցակարգը, այլև դրա փոխկապվածության աստիճանն այն իրավական կատեգորիաների հետ, որոնք անմիջական ազդեցություն են ունենում դրա բովանդակության ձևավորման վրա:

Այս առումով համաձայն ենք Դ.Ա. Մեդվեդևի այն կարծիքի հետ, որ «իրավական կարգավիճակ» հասկացությունը հիմնականում պետք է կիրառվի այնպիսի անորոշ սահմանումների փոխարեն, ինչպիսիք են «ընդհանուր իրավասուբյեկտությունը»[4]: Այլ կերպ ասած՝ անհատի փաստացի դիրքը սոցիալական հարաբերությունների այս կամ այն ոլորտում պետք է որոշվի նրա իրավական կարգավիճակով[5]:

---

[1] Общая теория государства и права / Под ред. М.Н. Марченко. Т. 1. - М., 1998. - С. 272-275; см. также работы советского периода: **Денисов А.К., Кириченко М.Г.** Советское государственное право. - М., 1957. - С. 24.

[2] A useful survey is Paul Sieghart, The Lawful Rights of Mankind: An Introduction to the International Legal Code of Human Rights, Oxford University Press, 1985.

[3] Система римского гражданского права / Под ред. Ю. Барона. - Киев, 1889. Кн. 5; **Медведев Д.А.** Проблемы реализации гражданской правосубъектности государственного предприятия: Автореф. дисс. ... канд. юрид. наук. - Л., 1990. - С. 13.

[4] **Зайцева О.Б.** Трудовая правосубъектность как правовая категория. - Оренбург, 2006. - С. 55.

[5] Современное зарубежное и международное частное право / Под ред. А.Л. Маковского. - М., 2001.

Ինչպես ճշգրիտ նշում է Ս.Ս. Ալեքսեևը, «կարգավիճակ» հասկացությունը լիովին համապատասխանում է առարկայի իրավական վիճակի կայուն, հիմնարար սկզբունքին, որը վերաբերում է նաև իրավաբանական անձանց՝ ընդհանուր (սահմանադրական) իրավունքների ու պարտականությունների միասնության մեջ:

Վերջինս «իրավական կարգավիճակ» հասկացությունը տարբերակում է այնպիսի հասկացությունից, ինչպիսին է քաղաքացու «իրավական դիրքը»:

Եթե «իրավական կարգավիճակը» ներկայացնում է առարկայի կայուն իրավական վիճակը, ապա ըստ վերջինիս՝ «իրավական դիրքը» ներկայացնում է անձի իրավունքների ու պարտականությունների փոփոխվող ամբողջությունը, որը պայմանավորված է որոշակի իրավահարաբերությունների շրջանակով:

Հեղինակը, այսպիսով, «իրավական կարգավիճակը» դիտարկում է որպես անձի ստատիկ վիճակ, մինչդեռ «իրավական դիրքը»՝ ըստ Ս.Ս. Ալեքսեևի, ընդհակառակը, ցույց է տալիս իրավունքների ու պարտականությունների դինամիկ շարժ, որն ապահովվում է իրավական փաստերի օգնությամբ:

Մեր կարծիքով, նման դիրքորոշման հետ կարելի է համաձայնել մասամբ՝ կասկածի տակ դնելով այն պնդումը, թե «քաղաքացու իրավական կարգավիճակը» վկայում է միայն նրա իրավունքների ու պարտականությունների ստատիկ վիճակի մասին:

Անշուշտ, իրավունքի տեսության մեջ կիրառվող «իրավական կարգավիճակ» և «իրավական դիրք» կատեգորիաները նույնական չեն, սակայն, մեր համոզմամբ, եթե «իրավական կարգավիճակը» ցույց է տալիս երեխայի իրավաբանական այն հնարավորությունները, որոնք երաշխավորված են օրենսդրական մակարդակով՝ հանդիսանալով զուտ որպես իրավական կատեգորիա, ապա «իրավական դիրքը, ավելի շուտ, մատնանշում է այն իրավաչափ կամ ոչ իրավաչափ գործողությունների շրջանակը, որոնք երեխայի համար առաջացնում են այս կամ այն չափով բարենպաստ կամ ոչ բարենպաստ հետևանքներ՝ հանդիսանալով, ավելի շատ, սոցիալական, քան թե իրավական հարաբերությունների արդյունք:

Դա կարող է պայմանավորված լինել ընտանիքում, երեխայի խնամքի կենտրոններում կամ այլ հաստատություններում ու վայրերում երեխայի՝ օրենսդրորեն ամրագրված իրավունքների նկատմամբ ոչ հարգալից դրսևորմամբ, նրանց իրավունքների ոտնահարմամբ կամ ոչ արժանապատիվ վերաբերմունքով, կամ ճիշտ հակառակը, երբ, օրինակ, առավել բարյացակամ

վերաբերմունքի արդյունքում երեխան իրեն զգում է որպես հասարակության լիիրավ անդամ՝ սիրված և ընդունված բոլորի կողմից:

Խնդիրն ավելի առարկայական է դառնում, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող երեխաների պարագայում, երբ, օրինակ, օրենսդրորեն առկա են բոլոր անհրաժեշտ նախադրյալները հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու կամ հասարակական անհրաժեշտ բարիքներից օգտվելու համար, սակայն, փաստացի, տարրական հնարավորությունների, այլ հարմարությունների բացակայության կամ դրանց սակավության պատճառով (սանդուղքներ, անվասայլակների համար նախատեսված անցուղիներ, տրանսպորտում կամ հանրային այլ վայրերում նրանց համար նախատեսված հարմարությունների բացակայություն և այլն) վերջիններս չեն կարողանում իրացնել օրենսդրորեն իրենց վերապահված իրավունքները:

Սա նշանակում է, որ այս դեպքում, առաջին հերթին, գործ ունենք սոցիալ-կենցաղային բարիքներից օգտվելու անհավասար հնարավորությունների՝ հետևապես, և, սոցիալական անհավասար հնարավորության հետ, որը մի շարք՝ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով, հանգեցնում է անձի իրավական դիրքի, սակայն ոչ իրավական կարգավիճակի անհավասարությանը, քանի որ, այս պարագայում, խնդիր չի առաջանում վերոնշյալը լուծել օրենսդրական ճանապարհով:

Բանն այն է, որ խնդիրը հաճախ կարգավորված է լինում հենց օրենսդրորեն, սակայն սոցիալական ոչ բավարար առաջընթացով կամ պատկան մարմինների ոչ պատշաճ ուշադրությամբ պայմանավորված՝ ոչ միշտ է հնարավոր լինում կյանքի կոչել վերը նշված իրավակարգավորումները (հաշմանդամություն ունեցողների ազատ տեղաշարժի համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերում, համապատասխան կահավորում և այլն):

Այլ բառերով ասած, եթե օրենսդրորեն ընձեռնված հնարավորությունները կյանքի չեն կոչվում կամ իրագործվում են օրենսդրից անկախ հանգամանքներով (օրինակ, գիտատեխնիկական առաջընթացի, բավարար կենսամակարդակի բացակայության կամ առկայության դեպքում), որի արդյունքում տուժում կամ բարելավվում է անձի վիճակը, այս պարագայում առավել տեղին է դառնում կիրառել «իրավական դիրք» եզրույթը, իսկ եթե խնդիրը պայմանավորված է իրավակարգավորումների համալիր բնույթով, այս դեպքում գործ ունենք արդեն անձի «իրավական կարգավիճակ» կատեգորիայի հետ:

Գտնում ենք նաև, որ «իրավական դիրքի» տուժելուն է առնչվում նաև ոչ պատշաճ վարչարարությունը, որի արդյունքում ընդունված ոչ իրավաչափ նորմատիվ ակտով կարող են տուժող կողմի համար առաջանալ էականորեն անբարենպաստ հետևանքներ՝ ազդելով վերջինիս աշխատանքային, իրավական, ֆինանսական, կարգապահական և այլ բնույթի իրավահարաբերությունների վրա:

Օրինակ, համակողմանիորեն չանցկացված ծառայողական քննության արդյունքում ընդունված ոչ իրավաչափ ակտով կարող է առաջանալ կարգապահական միջոցների այնպիսի բացասական ներազդեցություն, որը կարող է իրավունքի տվյալ սուբյեկտի համար առաջացնել թե՛ ֆինանսական միջոցների կորուստ (խոսքը գնում է դրամական միջոցների պահումներով պայմանավորված կարգապահական տույժերի մասին), թե՛ բացասականորեն անդրադառնալ նրա հոգեվիճակի վրա՝ հաղորդելով վերջինիս իրավիճակային կամ անարդարության «զոհի» զգացում՝ հետագայում բացասաբար ազդելով նաև աշխատանքի որակի, հետևապես և՝ աշխատանքային փոխհարաբերությունների ու կարգապահական նորմերի վրա:

Անշուշտ, այս ամենը կարելի է վերականգնել դատական կարգով՝ ստանալով արժանի փոխհատուցում, սակայն այն բարոյական վնասը, որն այդ ընթացքում կրում է տվյալ անձը, կարծում ենք, ամենից առաջ, խոսում է հենց նրա իրավական դիրքի տուժելու մասին:

Ինչ վերաբերում է անձի իրավական կարգավիճակին, ապա վերջինիս դինամիկ շարժը, մեր համոզմամբ, պայմանավորված է ոչ թե վերը նշված կամ նմանատիպ գործողություններով, այլ օրենսդրական նախաձեռնությունների համալիր բնույթով, որի պարագայում՝ իրավական դաշտի կատարելագործման արդյունքում, իրավահարաբերության սուբյեկտին ընձեռնվում են իրավունքի իրացման օրինական միջոցներ՝ օրենսդրական մակարդակով բարելավելու իր վիճակը:

Կարծում ենք, երբ Ս.Ս. Ալեքսեևը «իրավական կարգավիճակը» բնորոշում է իր ստատիկ բնույթով՝ բացառելով վերջինիս դինամիկ շարընթացը, նա ի նկատի ունի, նախևառաջ, այն իրավանորմերը, որոնց բնորոշ է առավել կոշտ, մշտական և հիմնարար բնույթը՝ նախատեսված կարագավորելու մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հետ կապված իրավահարաբերությունների այնպիսի շրջանակ, որոնց հետագա փոփոխության համար պահանջվում է օրենսդրական նախաձեռնությունների առավել երկարատև ժամանակահատված և ծավալուն ներպետական գործընթաց:

Ինչ խոսք, մեկնաբանման նման պարագայում հիմնարար բնույթ կրող իրավանորմերի ստատիկ վիճակը եթե նույնիսկ ինչ-որ տեղ կարելի է արդարացված համարել, ապա նույնը չի կարելի ասել ճկուն իրավանորմերի մասին, որոնց առաջնահերթությունն է լուծել ժամանակավոր կամ անցումային բնույթի կառավարչական հիմնախնդիրներ, ինչպես նաև կարգավորել տվյալ իրադրությամբ պայմանավորված, սակայն ոչ հեռահար նպատակ հետապնդող հարաբերություններ: Դա, միաժամանակ, կարող է պայմանավորված լինել նաև տվյալ պետության իրավահամակարգի առանձնահատկությամբ ու դրանց ինստիտուցիոնալ բնույթով:

Այսպես, օրինակ, ՀՀ Սահմանադրությունը՝ որպես պետության բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ, իր տեսակով համարվում է մշտական բնույթ ունեցող փաստաթուղթ՝ միաժամանակ աչքի ընկնելով ճկուն իրավանորմերով:

Այն փաստը, որ Մայր օրենքը վերջին երկու տասնամյակում առնվազն երկու անգամ ենթարկվել է հիմնարար փոփոխությունների, դրա վառ վկայությունն է:

Վերոգրյալը, սակայն, չի նշանակում, որ այն կրում է ժամանակավոր բնույթ, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, ժամանակավոր են համարվում այն սահմանադրությունները, որոնք առանձնահատուկ են անցումային բնույթ կրող պետություններին, որոնց վարչահիրավական կարգավիճակը դեռևս վերջնականորեն որոշված չէ կամ առկա են ներքաղաքական այնպիսի զարգացումներ, որոնք պահանջում են թեպետ ժամանակավոր, սակայն իրավիճակի հրամայականով պայմանավորված հրատապ լուծումներ (ժամանակավոր սահմանադրությունների բնույթը գերազանցապես կարող է պայմանավորված լինել նաև իշխող ռեժիմի քաղաքական ձեռագրով, որի արդյունքում էականորեն կարող է փոխվել մարդու իրավական կարգավիճակը):

Հայաստանի Հանրապետությունը, բնականաբար, չի դասվում նման պետությունների թվին, և այս առումով համարվում է միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ՝ տարբեր ոլորտներում կնքելով մի շարք միջպետական պայմանագրեր և հանձն առնելով տարաբնույթ պարտավորություններ ու այլ հանձնառություններ:

Չնայած վերջինիս՝ ՀՀ-ն իր համար նշմարել է իր բնույթով մշտական, սակայն ճկուն իրավանորմեր ամրագրող սահմանադրական ուղի, ինչը, կարծում ենք՝ հարափոփոխ ու բազմազան կենսապայմաններին զուգահեռ

զարգացող իրավակարգի պայմաններում հնարավորություն է տալիս անմասն չմնալ միջազգայնորեն ընդունված հանրահռչակ նորմերից՝ լայնորեն կիրառելով դրանք ներպետական մակարդակում, որտեղ, անշուշտ, նախապատվություն է տրվում մարդու իրավական կարգավիճակի բարելավմանն ու դրանից բխող իրավական գործընթացների ապահովմանը՝ հանդիսանալով կարևոր օրենսդրական երաշխիք:

Խոսքն այն իրավական երաշխիքների մասին է, որոնք տրվում են քաղաքացուն առաջին հերթին Սահմանադրությամբ, և որոշում են նրա սահմանադրական կարգավիճակը[1], ինչպես նաև դրանք այն հատուկ իրավունքներն ու պարտականություններն են, որոնք արտացոլում են անձի իրական իրավական կարգավիճակի առանձնահատկությունները:

Ինչպես արդեն նշվեց, իրավաբանական գրականությունում «իրավական կարգավիճակ» և «իրավական դիրք» կատեգորիաները հաճախ նույնացվում են, և, որպես կանոն, հիմնականում կիրառվում իբրև հավասարազոր հասկացություններ, սակայն իրավունքի տեսության մեջ այս հասկացությունների հարաբերակցության մասին հարցը մինչև օրս էլ վիճելի է համարվում:

Որոշ հեղինակներ կարծում են, որ չնայած «իրավական կարգավիճակ» և «իրավական դիրք» կատեգորիաները ինքնուրույն են, այնուամենայնիվ, դրանց նմանությունը չի բացառվում:

Մյուսների կարծիքով «իրավական կարգավիճակ» և «իրավական դիրք» հասկացությունները հոմանիշ են, ուստի անընդունելի են այս տերմինները տարանջատելու բոլոր փորձերը:

Այս տեսակետը գերակշռում է՝ չնայած այն հանգամանքին, որ քաղաքացին իրավահարաբերության մեջ կարող է հանդես գալ տարբեր որակներով, ինչը հաստատում է նրա՝ իրավական կարգավիճակի առանձնահատկությունների տերմինաբանական արտացոլման անհրաժեշտությունը:

Այսպես, որոշ առանձին հեղինակներ առաջարկում են տարբերակել վերոնշյալ հասկացությունները լայն և նեղ իմաստով՝ որպես ընդհանուրի և մասնավորի հարաբերակցություն, ընդ որում, «իրավական դիրք» եզրույթը

[1] **Воеводин Л.Д.** Индивидуальное и коллективное в конституционном статусе личности // Вестник МГУ. Серия 11. Право. 1997, № 5. - С. 3.

դիտարկելով որպես առավել լայն իրավական կատեգորիա, իսկ «իրավական կարգավիճակը»՝ առավել նեղ[1]:

Ինչևէ, այս հասկացությունների կիրառումը իրավունքի տեսության մեջ ցույց է տալիս, որ դրանք նույնական չեն, և առկա է դրանց տարբերակման օբյեկտիվ անհրաժեշտություն:

«Իրավական դիրքի» ընկալումը՝ «իրավական կարգավիճակի» նկատմամբ լայն իմաստով լուրջ հակասություններ չի առաջացնում և կիրառելի է իրավունքի բոլոր սուբյեկտների նկատմամբ, սակայն թե՛ երեխայի, թե՛ իրավունքի այլ սուբյեկտի պարագայում, առավել հակված ենք կիրառել «իրավական կարգավիճակ» տարբերակը՝ այն համոզմամբ, որ վերջինս առավել բնութագրական է իրավաբանական գիտության տեսանկյունից և առավել բնորոշ է արտահայտում իրավունքի սուբյեկտի իրավաբանական հնարավորությունների շրջանակը:

Այնուամենայնիվ, ինչպես տեսնում ենք, մի շարք գիտական ուսումնասիրություններում նշված հասկացությունների մեկնաբանությունը տարակարծությունների տեղիք է տալիս և գալիս է հաստատելու այն փաստը, որ այս եզրույթները, ճիշտ է, կրում են համալիր բնույթ, սակայն, այնուամենայնիվ, քաղաքացու, այդ թվում՝ երեխայի իրավական կարգավիճակի սահմանումը, հնարավոր է դառնում իրագործել միայն վերոնշյալ կատեգորիաները տարանջատելիս:

Սույն հասկացությունները տարանջատելու անհրաժեշտության մասին է վկայում նաև այն, որ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է երեխայի իրավական կարգավիճակի բնութագրման հետ կապված որոշակի տարիքային սահմանափակումներ, որոնց հետ օրենքը կապում է որոշակի իրավական հետևանքների առաջացում. խոսքը, առաջին հերթին, վերաբերում է գործունակությանը:

Այս առումով պետք է նշել, որ երեխայի ընտանեկան գործունակությունը նշանակալի չափով տարբերվում է նրա քաղաքացիական գործունակությունից՝ իր ծավալով և բովանդակությամբ, ինչը միջճյուղային իրավասուբյեկտության շրջանակներում իր դրսևորումն է գտնում, օրինակ, ամուսնաընտանեկան կամ աշխատանքային իրավահարաբերությունների

[1] **Витрук Н.В.** Указ. соч. - С. 25; **Александров З.К.** Теоретические вопросы правового статуса граждан зарубежных социалистических стран Европы: Автореф. дисс. ... канд. юрид. наук. - Свердловск, 1975. - С. 5-6; **Новоселов В.П.** Правовое положение граждан в советском государственном управлении. - Саратов, 1976. - С. 36.

բովանդակության մեջ, որը, ինչպես գիտենք, սկսում է ամբողջությամբ իրագործվել միայն որոշակի տարիքի հասնելուց հետո:

Հետևաբար, իրավական կարգավիճակի նեղ նորմատիվային ըմբռնումը՝ երեխայի ընդհանուր իրավական կարգավիճակի առնչությամբ, մեր կարծիքով, առավել նախընտրելի է՝ չնայած այն հանգամանքին, որ իրավական կարգավիճակի բովանդակության սահմանափակումը միայն երեխայի իրավունքներով և պարտականություններով կարող է հանգեցնել նրա կարգավիճակի ոչ լիարժեք ընկալման, որտեղ չկա կարգավիճակի բազմակողմանիություն և բազմաչափություն, և, այս առումով, կա մտավախություն, որ իրավունքի բարդ համակարգում երեխան կարող է, այսպիսով, չդիտարկվել որպես իրավական համակարգի լիարժեք կատեգորիա:

Ուսումնասիրության սույն ասպեկտի շրջանակներում պետք է ընդունել, որ երեխաների ընդհանուր իրավական կարգավիճակը թեև միասնական է, այնուամենայնիվ, առանձին կատեգորիայի երեխաների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները ևս պետք է արտացոլվեն նրա առանձին կարգավիճակի իրավական բովանդակության մեջ:

Մասնավորապես, հաշմանդամություն ունեցող կամ տարբեր պատճառներով, այդ թվում՝ աղետի հետևանքով ծնողազուրկ մնացած երեխայի իրավական կարգավիճակը իր բովանդակությամբ տարբերվում է առողջ երեխայի իրավական կարգավիճակից ինչպես այդ կարգավիճակի բովանդակությունը կազմող տարրերի քանակով, այնպես էլ դրանց որակական բովանդակությամբ:

Այդ իսկ պատճառով երեխայի ընդհանուր իրավական կարգավիճակը բնորոշելիս պետք է հաշվի առնել այն բոլոր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են, առաջին հերթին, երեխայի՝ որոշակի կատեգորիային պատկանելությամբ:

Խոսքը, առաջին հերթին, վերաբերում է այն երեխաներին, ովքեր տարբեր ֆիզիոլոգիական սահմանափակումների ու տարատեսակ հիվանդությունների պատճառով հաճախ զրկված են լինում ինքնուրույն իրացնելու իրենց իրավունքները, և, ընդհանուր առմամբ, հասարակության կողմից ոչ միշտ են ընկալվում որպես իրավունքի լիարժեք կատեգորիա:

Իրավական կարգավիճակի բովանդակության առանձնահատկությունը քաղաքացիության և իրավասուբյեկտության տեսանկյունից: Պետք է փաստել, որ պատմական տարբեր պատճառներով մեր երկրի Հիմնական

օրենքում քաղաքացու իրավական կարգավիճակը՝ որպես անկախ կատեգորիա, երբեք չի առանձնացվել ու չի դիտարկվել որպես այդպիսին:

Դա պայմանավորված է եղել հիմնականում գաղափարական վերաբերմունքով, քանի որ խորհրդային սահմանադրությունները մերժում էին անհատի իրավական կարգավիճակի այսպես կոչված արևմտյան մոդելները և չէին ճանաչում մարդու բնական իրավունքները:

Մարդու իրավունքները նրանց համար միայն այն բարիքներն էին, որոնք պետությունը շնորհում էր վերջիններիս՝ շեշտը դնելով ոչ թե անձի, այլ սոցիալ-տնտեսական ոլորտի վրա[1]:

Ավելին, իրավական կարգավիճակի ամրագրման հնարավորությունը՝ հիմնված այնպիսի կատեգորիաների վրա, ինչպիսիք են սոցիալական, ազգային, տարիքային, սեռական և այլն, դիտարկվել է որպես «քարոզչություն»[2]:

Գործող օրենսդրության, այդ թվում Սահմանադրության զարգացման ներկայիս մակարդակը ցույց է տալիս, որ մարդու ընդանուր իրավական կարգավիճակն անհնար է պատկերացնել առանց սահմանադրաիրավական նորմերի բովանդակային վերլուծության[3]:

Իրավակիրառ պրակտիկայում սահմանադրաիրավական նորմերն ընկալվում են որպես մարդու հիմնարար իրավունքներն ամրագրող դրույթների ամբողջություն, ինչը, միաժամանակ, հանդիսանում է նաև որպես բարդ համալիր ինստիտուտ՝ ներառելով մի շարք այլ ինստիտուտներ՝ քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, քաղաքացիությունը և իրավասուբյեկտությունը[4]:

Ըստ Ն.Վ. Վիտրուկի, անհատի ընդհանուր իրավական կարգավիճակն անհնար է պատկերացնել առանց այնպիսի նախադրյալների, ինչպիսիք են անձի իրավասուբյեկտությունն ու քաղաքացիությունը[5]:

---

[1] **Лебедев В.А.** Конституционно-правовая охрана и защита прав и свобод человека и гражданина в России (теория и практика современности). - М., 2005; **Чиркин В.Е.** Конституция и международный опыт // Государство и право. 1998, № 12. - С. 11-12.

[2] **Поленина С.В.** Тридцатилетие Конвенции ООН о ликвидации всех форм дискриминации в отношении женщин // Международное право и защита прав женщин. - М., 2019. - С. 8-9.

[3] **Матюшева Т.Н.** Конституционное право на образование и гарантии его реализации детьми со специальным социальным статусом в Российской Федерации: автореф. дисс. ... докт. юрид. наук. - М., 2016. - С. 3.

[4] **Борисова Н.Е.** Развитие ювенального права в России. - М., 1999. - С. 32, 33; **Хаманева Н.Ю.** Специфика правового статуса Уполномоченного по правам человека в Российской Федерации и проблемы законодательного регулирования его деятельности // Государство и право. 1997, № 9. - С. 25.

[5] **Витрук Н.В.** Общая теория правового положения личности. - М., 2008. - С. 8.

Իրավասուբյեկտության ավանդական ընկալումը ենթադրում է անձի իրավունակության և գործունակության՝ այսինքն իրավունքի լիարժեք սուբյեկտ լինելու հնարավորության առկայություն[1]:

Իրավասուբյեկտությունը՝ որպես ինքնուրույն իրավական երևույթ, տարբերվում է իրավունակությունից և առանձնանում է հետևյալ տարրերով՝

1. իրավասուբյեկտությունն ընդհանուր է, իրավունակությունը՝ հատուկ[2].

2. իրավասուբյեկտությունը բազմանշանակ հասկացություն է. մի դեպքում այն հավասարազոր է իրավունակությանը, այլ դեպքում այն կարող է ներառել թե՛ իրավունակությունը, թե՛ գործունակությունը[3].

3. իրավասուբյեկտությունը իրավունքի բոլոր ճյուղերում ներառում է ինչպես իրավունակությունը, այնպես էլ գործունակությունը[4]:

Առաջին երկու տեսանկյունների կողմնակիցները տարանջատում են իրավասուբյեկտությունն ու իրավունակությունը՝ ըստ սուբյեկտների իրավունքի և պարտականությունների ծավալի, այսինքն՝ ըստ քանակական հատկանիշների:

Երրորդ տեսանկյան կողմնակիցները ենթադրում են, որ իրավասուբյեկտությունը ենթադրում է իրավունք ունենալու և պարտականություն կրելու հնարավորություն՝ դրանց միաժամանակյա իրացմամբ:

Այլ խոսքով, իրավասուբյեկտությունը հանդես է գալիս անձի՝ որպես իրավունքի սուբյեկտի բնութագրիչ:

Ավանդաբար իրավասուբյեկտությունն իրենից ներկայացնում է երեք տարրի միասնականություն, այն է՝

1. իրավունակություն,

2. գործունակություն,

3. մեղսունակություն:

Հայտնի է, որ իրավունակությամբ մարդը օժտված է ի ծնե՝ այն դեպքում, երբ գործունակ նա դառնում է որոշակի տարիքի հասնելուց հետո՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այլ խոսքով, եթե հաշվի առնենք, որ իրավասուբյեկտության ամբողջական ծավալով մարդը կարող է օժտված լինել միայն որոշակի տարիքի հասնելիս,

[1] **Тарасова А.Е.** Правосубъектность граждан. Особенности правосубъектности несовершеннолетних, их проявления в гражданских правоотношениях. - М, 2008. - С. 40.

[2] **Толстой Ю.К.** К теории правоотношения. - Л., 1959. - С. 10.

[3] **Венедиктов А.В.** О субъектах социалистических правоотношений // Сов. государство и право. 1955. № 6. - С. 20.

[4] **Иоффе О.С.** Советское гражданское право: курс лекций. Ч. 3. - Л., 1958. - С. 28-33.

իրավասուբյեկտությունը, այս դեպքում՝ որպես իրավական կարգավիճակի ձեռքբերման կարևոր նախապայման, փաստացի հնարավոր է դառնում դիտարկել միայն 18 տարեկան դառնալուց հետո:

Ն.Վ. Վիտրուկը կարծում է, որ պետության կողմից ճանաչված իրավունքները, ազատությունները, օրինական շահերն ու պարտականությունները՝ իրենց միասնության մեջ, կազմում են ընդհանուր իրավական համակարգի առանցքը, որով էլ պայմանավորված է տվյալ անհատի իրավական կարգավիճակի առանձնահատկությունը:

Իսկ այնպիսի տարրեր, ինչպիսիք են իրավասուբյեկտությունն ու քաղաքացիությունը, պետք է հանդես գան այլ կերպ, քանի որ դա անհատի և պետության հարաբերությունն է, թեպետ, ըստ հեղինակի՝ հնարավոր է նաև նշված տարրերը դիտարկել որպես կառուցվածքային միավորներ, որոնք կարող են հանդես գալ որպես իրավական կարգավիճակ ունենալու անհրաժեշտ պայմաններ[1]:

Քաղաքացիությունը, որի ձեռքբերման ընդհանուր պայմանը ՀՀ տարածքում ծննդյան փաստն է՝ որպես անձի սահմանադրաիրավական կարգավիճակի հարցի լուծման միջոց, սույն խնդրի դիտարկման առանցքում կարևորագույն տեղ է զբաղեցնում, քանի որ ակնհայտ է, որ միայն վերջինս կարող է երեխային ընձեռել համապատասխան օրենսդրական հնարավորություններ:

Դրա հետ մեկտեղ, գտնում ենք, որ քաղաքացիությունն է թույլ տալիս առանձնացնել այն իրավունքների ու պարտականությունների շրջանակը, որոնցով օժտված է երեխան՝ ընդգծելով իրավական կարգավիճակով պայմանավորված հարաբերությունների յուրահատկությունն այն երեխաների նկատմամբ, ովքեր չունեն քաղաքացիություն (քաղաքացիությունը՝ որպես իրավական կատեգորիա, բնորոշվում է այնպիսի կայուն իրավական կապով, որը հիմնված է փոխադարձ իրավունքների ու պարտականությունների վրա):

Այլ կերպ ասած՝ քաղաքացիությունը գործում է որպես երեխայի իրավունքների և պարտականությունների ձևավորման համար անհրաժեշտ ու հիմնարար պայման:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ երեխայի իրավական կարգավիճակի ամրագրման համար պահանջվում է երկու նախադրյալի՝ քաղաքացիության և

[1] **Витрук Н.В.** Указ. соч. - С. 29, 32.

իրավասուբյեկտության առկայություն, ընդ որում վերջինս պայմանավորված է նրա՝ որոշակի տարիքի հասնելու հանգամանքով:

Իսկ ինչ վերաբերում է Ն.Վ. Վիտրուկի և մի շարք հեղինակների կողմից մատնանշված այլ նախադրյալներին, կարծում ենք, որ դրանք կարելի է համարել լրացուցիչ կամ ածանցյալ պայմաններ, որոնց գործնական կիրառումը հնարավոր է դառնում միայն որոշակի հանգամանքների առկայության պարագայում, քանի որ դրանք թեև անհրաժեշտ, սակայն, ընդհանուր առմամբ, բավարար պայմաններ չեն երեխայի իրավական կարգավիճակի ամրագրման համար:

Այն տեսակետը, որ «իրավական կարգավիճակի» կատեգորիան լուրջ տեսական հիմնավորման և զարգացման կարիք ունի, տարբեր ժամանակներում առաջ է քաշվել մի շարք հեղինակների կողմից:

Այսպես, Լ.Դ. Վոևոդինը, Վ.Ա. Պատյուլինը, Ց.Ա. Յամպոլսկայան կարծում են, որ հենց անձի իրավական կարգավիճակի տեսության հասկացությունների համակարգի չմշակվածությունն է բերում նրա բովանդակության բացահայտման փորձերին այնպիսի տարրերի միջոցով, ինչպիսիք են քաղաքացիությունը, իրավասուբյեկտությունը, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները:

Այս համատեքստում, ըստ վերջիններիս, քաղաքացիությունը, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները համարվում են առանձին իրավական կատեգորիաներ, որոնք տարբերվում են իրենց կոնկրետացման աստիճանով կամ որպես միատարր երևույթի դրսևորման (դինամիկայի) որոշակի փուլեր՝ այս կամ այն կերպ վկայում են «սուբյեկտիվ իրավունքի մոդիֆիկացիայի» մասին[1]:

Միաժամանակ, անհրաժեշտ է պարզաբանել, որ քաղաքացիությունը, իրավասուբյեկտությունը, իրավունքներն ու պարտականությունները չնայած և փոխկապակցված կատեգորիաներ են, սակայն, պետք է նշել, որ դրանցից յուրաքանչյուրն ունի ինքնուրույն նշանակություն, օժտված է հատուկ բովանդակությամբ և բնութագրում է անձի իրավական կարգավիճակի տարբեր ասպեկտներ:

[1] **Пионтковский А.А.** К вопросу о взаимоотношении объективного и субъективного права // Сов. государство и право. 1958, № 5. - С. 47; **Кечекьян С.Ф.** Правоотношения в социалистическом обществе. - М., 1959. - С. 48.

Այս դեպքում, ուսումնասիրությունը պետք է իրականացնել տարբեր իրավական երևույթների վերլուծության միջոցով, որոնք տարբերվում են իրենց իրավական բնույթով և էությամբ:

Եթե ելնում ենք այն փաստից, որ սահմանադրաիրավական կարգավիճակն իրենից ներկայացնում է քաղաքացու իրավունքների ու պարտականությունների համալիր, որոնք կազմում են նրա իրավական կարգավիճակը՝ որպես տվյալ պետության քաղաքացի, ապա պետք է ընդունել, որ քաղաքացու ընդհանուր իրավական կարգավիճակն այնպիսի իրավունքների ու պարտականությունների ամբողջություն է, որոնք ունեն ՀՀ բոլոր քաղաքացիները՝ առանց բացառության, մինչդեռ, գրականության մեջ այս հարցի վերաբերյալ կան բևեռային տեսակետներ:

Որոշ հեղինակներ կարծում են, որ քաղաքացիների բոլոր սահմանադրական իրավունքներն իրենց էությամբ վերջիններիս սուբյեկտիվ իրավունքներն են[1]:

Մյուսները՝ Յու.Կ. Տոլստոյ, Ռ.Օ. Հեյֆիցա, ընդհակառակը, պնդում են, որ ոչ բոլոր իրավունքներն են սուբյեկտիվ:

Ըստ նրանց՝ սուբյեկտիվ իրավունքը կանխավ տրված իրավունք է, որը գտնվում է իրավունակության տիրույթում և հանդիսանում է որպես դրա տարր[2]:

Ըստ էության, հիմնական իրավունքների համալիր ունենալու հնարավորությունը պայմանավորված է ոչ միայն դրա նորմատիվ բաղադրիչով (հիմնական իրավունքներն ու պարտականությունները նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ), այլև անձի քաղաքացիության առկայությամբ:

Դա պայմանավորված է նրանով, որ միայն քաղաքացին կարող է ունենալ պետության հիմնական օրենքում ամփոփվող հիմնարար իրավունքներն ու պարտականությունները, հետևաբար՝ ունենալ ընդհանուր իրավական կարգավիճակ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք պնդել հետևյալը. այն երեխայի ընդհանուր իրավական կարգավիճակը, որն օտարերկրյա պետության

[1] **Алексеев С.С.** Общая теория права. - М., 2002. - С. 142-143; **Патюлин В.А.** Государство и личность в СССР. - М., 1974. - С. 200-201; **Матузов Н.И.** Личность. Права. Демократия: теоретические проблемы субъективного права. - Саратов, 1972. - С. 189, 205; **Фарбер И.Е.** Свобода и права человека в советском государстве. - Саратов, 1974. - С. 54-55.

[2] **Толстой Ю.К.** К теории правоотношения. - С. 10; **Халфина Р.О.** Общее учение о правоотношении. - М., 1974. - С. 123

քաղաքացի է, ակնհայտորեն տարբերվում է ՀՀ քաղաքացիություն ունեցող երեխայի ընդհանուր իրավական կարգավիճակից, քանի որ Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան օժտված է ընդհանուր իրավասուբյեկտությամբ, որի բովանդակությունը հատուկ իրավունքներն ու պարտականություններն են, մինչդեռ ՀՀ քաղաքացի չհանդիսացող երեխան նման կարգավիճակ չունի:

Եզրակացություն

Այսպիսով, քննարկելով երեխայի կարգավիճակին վերաբերող՝ մի շարք հեղինակների կողմից առաջ քաշված տարբեր դիրքորոշումներ, միաժամանակ, երեխայի կարգավիճակը դիտարկելով տարբեր բովանդակությամբ իրավական հասկացությունների ընդհանուր համատեքստում՝ առավել հակված ենք հետևյալին.

1. իրավունքի սուբյեկտի՝ այդ թվում երեխայի, տարաբնույթ իրավահարաբերությունների շրջանակներում ունեցած դիրքը իրավաբանորեն բնութագրելիս կիրառել «իրավական կարգավիճակ» եզրույթը, քանի որ վերջինս առավել բնորոշ է արտահայտում երեխայի իրավական հնարավորությունների մակարդակը՝ ելնելով նրանից, որ տեսական ընկալումների մեջ հենց «իրավական կարգավիճակ» տերմինն է ամենից առաջ ասոցացվում «իրավասուբյեկտություն» հասկացության հետ, որը պայմանավորված է այնպիսի տարրերի համակցությամբ, ինչպիսիք են իրավունակությունը, գործունակությունը և մեղսունակությունը, որոնք էլ հանդիսանում են իրավունքի սուբյեկտին ներկայացվող պարտադիր բաղադրիչներ՝ թույլ տալով երեխային դիտարկել և՛ իրավունքի նորմատիվային սկզբունքների ընդհանուր առանցքում, և՛ որպես իրավունքի միջճյուղային կատեգորիա:

Ինչ վերաբերում է «իրավական դիրք» հասկացությանը, գտնում ենք, որ վերջինս, ըստ էության, չի հանդիսանում զուտ մասնագիտական կատեգորիա և բազմաշերտ սոցիալական կապերի համակարգում ավելի շատ արտացոլում է անհատի դիրքը՝ պայմանավորված թեև փաստական, սակայն ոչ միշտ իրավաբանական երևույթների հետ:

Այլ բառերով ասած՝ «իրավական կարգավիճակի» նախադրյալներն առավել կայուն են և ընկած են սուբյեկտիվ իրավունքի տիրույթում՝ ի դեմս իրավունակության, մինչդեռ «իրավական դիրքի» պարագայում նման

նախադրյալներ առկա չեն, քանի որ այս դեպքում ավելի շուտ առնչվում ենք կոնկրետ իրավիճակով պայմանավորված փոփոխական երևույթների, քան թե իրավական փաստերի հետ:

2. Երեխայի իրավական կարգավիճակն ամենից առաջ բնութագրվում է երկու նախադրյալի՝ քաղաքացիության և իրավասուբյեկտության պարտադիր առկայությամբ, որոնք անմիջականորեն կապված են երեխայի ծննդյան փաստով, և եթե առաջինը բնորոշվում է փոխադարձ իրավունքների ու պարտականությունների կայուն իրավական կապով, ապա երկրորդին՝ ի դեմս իր իրավունակության տարրի, առավել բնորոշ է ընդհանրական բնույթը՝ որպես իրավունքի ցանկացած սուբյեկտի կարևոր բաղադրիչ:

Ինչ վերաբերում է քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային և այլ իրավահարաբերություններում երեխայի մասնակցության աստիճանին, ապա վերջիններս դիտարկվում են սոսկ որպես իրավունքի միջճյուղային կատեգորիա, որտեղ երեխայի իրավական կարգավիճակը սահմանափակվում է իրավունքի տվյալ ճյուղի օրենսդրական պահանջներով, որի պարագայում երեխայի՝ իրավունքի լիիրավ սուբյեկտ լինելու հանգամանքն ամբողջությամբ չի արտացոլվում:

Այլ կերպ ասած՝ երեխայի իրավական կարգավիճակի բնութագրման տեսանկյունից միայն քաղաքացիությունն ու իրավասուբյեկտությունն են հանդիսանում որպես կայուն իրավական նախադրյալներ, քանի որ սահմանափակված չեն իրավունքի միջճյուղային պատկանելությամբ, այլ հանդիսանում են սուբյեկտի իրավական կարգավիճակին ներկայացվող ինքնուրույն (ոչ ածանցյալ) և պարտադիր բաղադրիչներ, որոնք ուղղակիորեն պայմանավորված են երեխայի ծննդյան փաստով և վերջինիս՝ բնական իրավունքի իրացմամբ:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. **Якимов А.Ю.** Статус субъекта права (теоретические вопросы) // Государство и право. 2003, № 4.
2. **Бахрах Д.Н.** Субъекты советского административного права. - Свердловск, 1985.
3. **Нерсесянц В.С.** Общая теория права и государства. - М., 1999;
4. **Поляков А.В.** Общая теория права: курс лекций. - СПб., 1997.
5. Права человека / Под ред. Е.А. Лукашевой. - М., 1995.
6. **Мишин А.А.** Конституционное (государственное) право зарубежных стран. - М., 1996.
7. **Стрекозов В.Г., Казанцев Ю.Д.** Государственное (конституционное) право Российской Федерации. - М., 1995.
8. **Стрекозов В.Г., Казанцев Ю.Д.** Конституционное право. - М., 2001.
9. Общая теория государства и права / Под ред. М.Н. Марченко. Т. 1. - М., 1998.
10. **Денисов А.К., Кириченко М.Г.** Советское государственное право. - М., 1957.
11. Система римского гражданского права / Под ред. Ю. Барона. Кн. 5.- Киев, 1889.
12. **Медведев Д.А.** Проблемы реализации гражданской правосубъектности государственного предприятия: автореф. дисс. ... канд. юрид. наук. - Л., 1990.
13. **Зайцева О.Б.** Трудовая правосубъектность как правовая категория. - Оренбург, 2006.
14. Современное зарубежное и международное частное право / Под ред. А.Л. Маковского. - М., 2001.
15. **Воеводин Л.Д.** Индивидуальное и коллективное в конституционном статусе личности // Вестник МГУ. Серия 11. Право. 1997, № 5.
16. **Алексеев С.С.** Общая теория права. - М., 2002.
17. **Лебедев В.А.** Конституционно-правовая охрана и защита прав и свобод человека и гражданина в России (теория и практика современности). - М., 2005.
18. **Чиркни В.Е.** Конституция и международный опыт // Государство и право. 1998, № 12.
19. **Поленина С.В.** Тридцатилетие Конвенции ООН о ликвидации всех форм дискриминации в отношении женщин // Международное право и защита прав женщин. - М., 2019.

20. **Матюшева Т.Н.** Конституционное право на образование и гарантии его реализации детьми со специальным социальным статусом в Российской Федерации: автореф. дисс. ... докт. юрид. наук. - М., 2016.

21. **Борисова Н.Е.** Развитие ювенального права в России. - М., 1999.

22. **Хаманева Н.Ю.** Специфика правового статуса Уполномоченного по правам человека в Российской Федерации и проблемы законодательного регулирования его деятельности // Государство и право. 1997, № 9.

23. **Витрук Н.В.** Общая теория правового положения личности. - М., 2008.

24. **Тарасова А.Е.** Правосубъектность граждан. Особенности правосубъектности несовершеннолетних, их проявления в гражданских правоотношениях. - М., 2008.

25. **Толстой Ю.К.** К теории правоотношения. - Л., 1959.

26. **Венедиктов А.В.** О субъектах социалистических правоотношений // Сов. государство и право. 1955, № 6.

27. **Иоффе О.С.** Курс лекций. Советское гражданское право. Ч. 3. - Л., 1958.

28. **Пионтковский А.А.** К вопросу о взаимоотношении объективного и субъективного права // Сов. государство и право. 1958, № 5.

29. **Кечекьян С.Ф.** Правоотношения в социалистическом обществе. - М., 1959.

30. **Патюлин В.А.** Государство и личность в СССР. - М., 1974. - С. 200-201;

31. **Матузов Н.И.** Личность. Права. Демократия: теоретические проблемы субъективного права. - Саратов, 1972.

32. **Фарбер И.Е.** Свобода и права человека в советском государстве. - Саратов, 1974.

33. **Толстой Ю.К.** К теории правоотношения.

34. **Халфина Р.О.** Общее учение о правоотношении. - М., 1974.

35. **Александров З.К.** Теоретические вопросы правового статуса граждан зарубежных социалистических стран Европы: автореф. дисс. ... канд. юрид. наук. - Свердловск, 1975.

36. **Новоселов В.П.** Правовое положение граждан в советском государственном управлении. - Саратов, 1976.

37. A useful survey is Paul Sieghart, The Lawful Rights of Mankind: An Introduction to the International Legal Code of Human Rights, Oxford University Press, 1985.

ПРАВОВОЙ СТАТУС РЕБЕНКА В КОМПЛЕКСНОМ ИНСТИТУТЕ ПРАВА

Аннотация

Определение правового статуса ребенка требует всестороннего изучения теоретических подходов, что, в свою очередь, требует определения не только понятия «правовой статус», но и его структурных элементов.

Теоретико-практическая необходимость разработки концепции "правового статуса" ребенка обусловлена тем, что единого подхода к этому вопросу нет.

В юридической литературе в связи с вышеизложенным существуют различные диаметрально противоположные точки зрения

Некоторые авторы, наряду с понятием "правовой статус", применяют термин "правовое положение", пытаясь обобщить эти два понятия, рассматривая их в общем контексте правовых понятий, не отделяя обусловленные ими юридические факты от неправовых.

В рамках этой статьи была предпринята попытка обсудить "правовой статус ребенка" в контексте двух важных предпосылок: гражданства и юрисдикции как категорий, не ограниченных межотраслевой принадлежностью права, и самостоятельных и обязательных компонентов, определяющих статус субъекта права, придерживаясь мнения, что последние лучше всего определяют факт рассмотрения ребенка как полноправного субъекта права, в отличие от степени участия ребенка в гражданских, семейных, трудовых и других правоотношениях, где рассмотрение последнего как полноценного субъекта права ограничивается рамками регулирования межотраслевых норм права.

Ключевые слова: правовой статус, правовое положение, юрисдикция, правоспособность, дееспособность, вменяемость, субъективное право.

THE LEGAL STATUS OF A CHILD IN A COMPREHENSIVE INSTITUTE OF LAW

Annotation

Determining the legal status of a child requires a comprehensive study of theoretical approaches, which, in turn, requires defining not only the concept of "legal status" but also its structural elements.

The theoretical and practical need to develop the concept of a child's "legal status" is due to the fact that there is no single approach to this issue.

In connection with the above, there are various points of view in the legal literature, which differ from each other by diametrically opposed points of view.

Some authors, along with the concept of "legal status", use the term "legal position", trying to generalize these two concepts, considering them in the general context of legal concepts, without separating the legal facts determined by them from the non-legal ones.

Within the framework of this article, an attempt was made to discuss the "legal status of a child" in the context of two important prerequisites: citizenship and jurisdiction as categories not limited by the intersectoral affiliation of law, and independent and mandatory components that determine the status of a legal entity, adhering to the opinion that the latter best determine the fact of considering a child as a full-fledged legal entity, unlike it depends on the degree of the child's participation in civil, family, labor and other legal relations, where the consideration of the latter as a full-fledged subject of law is limited to the framework of regulation of intersectoral legal norms.

Keywords: legal status, legal position, jurisdiction, legal capacity, capacity to act, sanity, subjective law.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 01.06.2025 թ., տրվել է գրախոսության 02.06.2025 թ., ընդունվել է տպագրության 13.06.2025 թ.: